

**Զեկույց -հաշվետվություն «Միլվա Կապուտիկյան» անվան
գերմանահայ կանանց միության 44–օրյա արցախյան պատերազմի
ժամանակ հայտարարված «Խաղաղություն Հայաստանին»
մարդասիրական նախաձեռնության մասին**

Քյոլն, 28 փոտրվարի, 2022թ.

Բովանդակություն

Ներածություն	3
Հաշվետվություն ստացված ֆինանսական միջոցների/հանգանակությունների և դրանց ծախսման վերաբերյալ.....	5
Հաշվետվություն բժշական միջոցների և դրանց հատկացման վերաբերյալ	11
Հաշվետվություն հումանիտար/մարդասիրական օգնության և դրանց հատկացման վերաբերյալ	13
Եզրակացություն	20

Ներածություն

2020թ-ի սեպտեմբերի 27-ին, առավոտյան ժամը 7:10-ին, Արցախից ստացվեցին առաջին լուրերը, որ Ադրբեջանը Արցախի Հանրապետության ուղղությամբ սկսել է օդային և հրթիռային հարձակում: Ակնհայտ էր՝ Արցախում լայնամասշտաբ պատերազմ էր սկսվել: Միյուրքն առավել քան երբևէ ցանկանում էր լինել իր ժողովրդի կողքին, սատարել նրան և ժամանակ չկորցնելով՝ հասնել օգնության:

«Միլվա Կապուտիկյան» անվան գերմանահայ կանանց միությունը սեպտեմբերի 30-ին, սոցիալական ցանցերի միջոցով հայտարարեց բժշկական, ֆինանսական և հումանիտար օգնություն կազմակերպելու իրենց նախաձեռնության մասին:

Սակայն, ժամանակի սղության և խնդրի առաջնահերթության պատճառով, հնարավոր չէր լինում նախաձեռնությունը սկսել իրավական բոլոր պահանջներին համապատասխան, այն է՝ «Միլվա Կապուտիկյան» անվան գերմանահայ կանանց միությունը, իր նախաձեռնությունը սկսելուց առաջ, պետք է հրավիրեր միության անդամների արտահերթ նիստ և նրանց համաձայնության հիման վրա միայն՝ սկսեր այս նախաձեռնությունը: Սույն զեկույց-հաշվետվության միջոցով հնարավոր պետք է լիներ «Խաղաղություն Հայաստանին» ֆինանսա-մարդասիրական բարեգործական ակցիային միության մասնակցության համաձայնությունը գոնե հետին թվով՝ միության համար լրջագույն խնդիրներից խուսափելու համար:

Ձեկույցը, առկա և ներկայացված ողջ փաստաթղթերի և նամակագրության քննության հիման վրա, պատրաստեցին «Միլվա Կապուտիկյան» անվան գերմանահայ կանանց միության 2021թ-ի սեպտեմբերի 26-ին տեղի ունեցած արտահերթ ժողովի շրջանակներում քվեարկության հիման վրա լիազորված անձինք Աղախանի Սարմենը (նախաձեռնության ակտիվ մասնակից), Թումաք Ժաքլինը (միության անդամ և նախաձեռնության ակտիվ մասնակից), Կարապետյան Գնունին (նախաձեռնության ակտիվ մասնակից) ու Նվարդ Կարումյանը (միության անդամ):

Օգնությունը ժամանում էր ամբողջ Գերմանիայից: Բոլոր ցանկացողները իրենց նվիրատվությունը կարող էին բերել հետևյալ երկու հասցեներով.

1. **հոկտեմբերի 3-ին**, ժամը 11:00-18:00, «Ալտերա» հյուրանոց, Թիբոլդգասսե 133-135, 50676 ք. Քյոլն,
2. **հոկտեմբերի 4-ին**, ժամը 11:00-18:00, Կարդինալ Ֆրինզս անվան Գիմնազիա, Ռուդոլֆ Հան փող., 53227 Բոն հասցեներով,

3. Ինչպես նաև իրենց հանգանակությունները փոխանցել «Միլվա Կապուտիկյան» անվան գերմանահայ կանանց միության պաշտոնական հաշվեհամարին կամ Paypal առցանց վճարման համակարգի, "Facebook" սոցիալական հարթակի միջոցով և առձեռն եղանակով:

Կամավորների մեծ թվից արագ ձևավորվեց 14 հոգուց բաղկացած հիմնական աշխատանքային խումբ, որի աշխատանքի շնորհիվ միայն հնարավոր եղավ բժշկական և նյութական օգնության տեսակավորումը, փաթեթավորումը և ուղարկման համար նախապատրաստումը: Այս աշխատանքային խմբի գործունեությունը, հաղորդակցությունը Հայաստանի և Գերմանիայի Դաշնային հանրապետությունում ՀՀ դեսպանատան հետ համակարգել է «Միլվա Կապուտիկյան» անվան գերմանահայ կանանց միության ՀԿ պետական ռեգիստրում գրանցված նախագահ Աիլին Բերդուդ-Մերինոն (Մելքումյանցը):

«Խաղաղություն Հայաստանին» ֆինանսա-մարդասիրական բարեգործական ակցիայի ընթացքում տեղի է ունեցել աշխատանքային խմբի երկու ժողով, որոնց նպատակն էր լոգիստիկ հարցերի և ստացված ֆինանսական նվիրատվությունների օգտագործման հետ կապված հարցերի քննարկումը: Քննարկումների արդյունքում որոշված էր հումանիտար և բժշկական օգնության վերաբաշխման գործընթացն ամբողջովին թողնել ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությանը: Ֆինանսական նվիրատվությունները տնօրինման նպատակով՝ պետք է տրամադրվեին ՀՀ-ում գործող որևէ հասարակական կազմակերպությանը: Ստացված ֆինանսական, բժշկական և հումանիտար միջոցների տրամադրումը Հայաստանում «Խաղաղություն Հայաստանին» ֆինանսա-մարդասիրական բարեգործական ակցիայի մասնակիցներից որևէ մեկի անմիջական մասնակցությամբ երբևէ չի քննարկվել կամ դրա շուրջ երբևէ որևէ որոշում չի ընդունվել:

Սույն հաշվետվություն-զեկույցը բաղկացած է հետևյալ բաժիններից՝

- ա. Հաշվետվություն ստացված ֆինանսական միջոցների և դրանց ծախսման վերաբերյալ,
- բ. Հաշվետվություն բժշկական միջոցների և դրանց հատկացման վերաբերյալ,
- գ. Հաշվետվություն հումանիտար/պարենային օգնության հատկացման վերաբերյալ:

«Միլվա Կապուտիկյան» անվան գերմանահայ կանանց միությունն իր խորին շնորհակալությունն է հայտնում բոլոր նվիրատուներին և «Խաղաղություն Հայաստանին» բարեգործական ակցիայի բոլոր մասնակիցներին՝ Հայաստանին և Արցախին ցուցաբերված աջակցության համար:

ա. Հաշվետվություն ստացված ֆինանսական միջոցների/հանգանակությունների և դրանց ծախսման վերաբերյալ

«Միլվա Կապուտիկյան» անվան գերմանահայ կանանց միության միջոցով Արցախին, հայ զինվորներին և նրանց ընտանիքներին ֆինանսական նվիրատվություն/հանգանակություն կարելի էր կատարել հետևյալ եղանակներով.

- բանկային փոխանցում «Միլվա Կապուտիկյան» միության հաշվեհամարին,
- «Paypal» առցանց վճարման համակարգի միջոցով,
- առձեռն հանգանակության,
- «Facebook» սոցիալական հարթակի միջոցով:

Ստորև աղյուսակի տեսքով բերված են վերը նշված եղանակներով մեր հայրենակիցների կողմից կատարված ամբողջ դրամական հանգանակությունները:

Աղյուսակ 1՝

Հաշվի տեսակ՝	Սուսք՝	Ելք՝	Նշումներ՝
Paypal	4.438,36 €	1.875,77 €	
Facebook	2.860,37 €	2.812,46 €	հաշիվը ՀՀ մեկնելիս փակվել է
		47,91 €	Վճարումներ
Sparkasse	45.622,81 €	39.898,37 €	
Առձեռն կատարված նվիրատվություններ	<u>5.885,00 €</u>	<u>5.885,00 €</u>	
Ընդամենը՝	58.806,64 €	50.521,51 €	

Նվիրատվություններից ստացված մնացորդային գումարը ներկայումս կազմում է 8.285,13 €:

Ինչպես երևում է աղյուսակ 1-ից, ընդամենը ստացվել է **58.806,64** եվրո գումար, որի, ըստ ներկայացված փաստաթղթերի, առաջնային տնօրինողն է եղել «Միլվա Կապուտիկյան» անվան գերմանահայ կանանց միության նախագահը՝ Աիլին Բերդուդ-Մերինոն (Մելքումյանը):

Ֆինանսական նվիրատվությունների երկրորդային տնօրինողներն են եղել Անահիտ Մոզոյանը և նրա ամուսին Արմեն Պատվականյանը (ք. Երևան), «Best Deal» ՍՊԸ-ի տնօրեն Թադե Եղիազարյանը (ք. Երևան), Ստեփան Թարոյանը (ք. Երևան), Արմեն Բայրամյանը (ք. Երևան), Լուսինե Իկլիկյանը (ք. Գյումրի), «Mel-Express» ընկերությունը (ք. Քյոլն), Հայ-իրանական բժշկական միությունը (ք. Թեհրան), Ապարանի տարածաշրջանի հոգևոր հովիվ Տեր Մուշե քահանա Վահանյանը (ք. Ապարան):

Վերը նշված անձինք ֆինանսական միջոցները ստացել են առձեռն կամ PayPal/Moneygram առցանց վճարման համակարգի և բանկային փոխանցումների միջոցով: Բանկային

փոխանցումներն իրականացվել են «Միլվա Կապուտիկյան» գերմանահայ կանանց միության նախագահ Աիլին Բերդուդ-Մերինոյի և միության գանձապահ Ազաթա Սիթիի կողմից: PayPal/Moneygram կամ առձեռն բոլոր փոխանցումները կատարել է միայն Աիլին Բերդուդ-Մերինոն:

Ինչպես վկայում են բանկային հաշիվների և փոխանցումների քաղվածքները, դրամական միջոցների հետագա տնօրինման նպատակով՝ Moneygram վճարման համակարգի միջոցով տարբեր մարդկանց կամ ընկերություններին կատարված դրամական փոխանցումներն երբեմն իրականացվել են Աիլին Բերդուդ-Մերինոյի անձնական հաշվեհամարից և այնուհետև փոխհատուցվել «Միլվա Կապուտիկյան» անվան գերմանահայ կանանց միության բանկային հաշվեհամարից:

«Facebook» սոցիալական հարթակի միջոցով ստացված գումարը «Միլվա Կապուտիկյան» անվան գերմանահայ կանանց միության նախագահին ամբողջովին (2 812,46 եվրո) վերցրել է հոկտեմբեր ամսին Հայաստան մեկնելիս:

«Միլվա Կապուտիկյան» անվան գերմանահայ կանանց միության անդամուհի Ժաքլին Թումաքը, լինելով «Խաղաղություն Հայաստանին» մարդասիրական ակցիայի ակտիվ մասնակից, կամավոր ստանձնել էր դրամահավաքի հաշվապահական հաշվառումը: Սակայն հաշվապահական հաշվառման համար անհրաժեշտ փաստաթղթերը, բանկային քաղվածքները և կատարված տարբեր վճարումները փաստող փաստաթղթերը միշտ նրան տրամադրվել են 4-6 շաբաթ ուշացումով և եղել են ոչ ամբողջական: Եվ հետևաբար, վճարումները և դրանց հետ կապված անհամապատասխանությունները ի հայտ են եկել միայն շաբաթներ կամ ամիսներ անց:

Բժշկական, հումանիտար և ֆինանսական օգնության Հայաստանում ստացման, ուղարկված բեռի մաքսազերծման, բաշխման և տրամադրման նպատակով «Միլվա Կապուտիկյան» անվան գերմանահայ կանանց միության նախագահը կատարել է երկու այցելություն Հայաստանի Հանրապետություն 19.10.2020 և 20.11.2020:

Առաջին այցելությունը կատարվել է հոկտեմբերի 19-ին, տևել մինչև հոկտեմբերի 24-ը: Սույն այցելության հիմնական նպատակն էր տեղում՝ Հայաստանում, համակարգել հումանիտար օգնության ստացումն ու բաշխումը, ինչպես նաև Գերմանիայի „Stern“ օրաթերթի լուսանկարիչ Յոնաս Բրենգի հետ միասին հողվածի և տեղում արված լուսանկարների միջոցով՝ լսելի դարձնել Արցախում կատարվող իրադարձություններն ու դժբախտությունը: Այնուհետև հողվածը հրապարակվել է „Stern“ օրաթերթում, ինչի շնորհիվ հնարավոր է եղել հավաքել 10,000 եվրո նվիրատվություն: „Stern“-ի խմբագրությանն ուղղված հարցման համաձայն՝ թոնիքի հետ կապված ծախսերը և 700 ԱՄՆ դոլարի չափով ՀՀ-ում առաջ եկած ծախսերը՝ մեքենայի վարձույթ, տեսախցիկի տեղափոխում և այլն, ամբողջովին

Ֆինանսավորվել են օրաթերթի խմբագրության հաշվին: Հետադարձ չվերթի հետ կապված անհասկանալի պատճառներով՝ հետադարձ տոմսի համար դրամահավաքի միջոցների հաշվին վճարված ծախսը, որը կազմել է 1.609,18 եվրո (kiwi.com), փոխանցվել է Աիլին Բ.– Մերինոյի հաշվեհամարին: Սակայն այս գումարը չի ընդունվել սույն զեկույցի համար պատասխանատու աշխատանքային խմբի անդամների կողմից: Հայաստան այս այցելության համար «Միլվա Կապուտիկյան» անվան գերմանահայ կանանց միության նախագահը և նրա ուղեկից Սարմեն Ադախանին հանձնել են COVID երկու թեսթ, ինչպես նաև ստիպված են եղել օդանավակայանում վճարել բեռի հավելավճար, սույն գումարը վճարվել է ֆինանսական հանգանակություններից և կազմել է 390 եվրո:

Աղյուսակ 2.2՝

Ամսաթիվ՝	Վճարման եղանակ՝	Ստացող կամ փոխանցումը նախատեսված է եղել՝	Գումարի չափը (EUR)՝	առկա ապացույց՝
20.10.2020	սոճեռն	COVID թեսթ	60,00	այո
20.10.2020	սոճեռն	Ուղեբեռի հավելավճար (բժշկական բեռ)	330,00	Այո
Ընդամենը՝			390,00	

Այստեղ անհրաժեշտ է նշել, որ բեռի հավելավճարը վճարվել է բժշկական բեռի համար: 2-րդ ուղևորությունը Հայաստան տեղի է ունեցել 2020թ -ի նոյեմբերի 20-25-ը, որի ժամանակ «Միլվա Կապուտիկյան» անվան գերմանահայ կանանց միության նախագահին ուղեկցել է «Լույս» նվազախմբի ղեկավար Արտակ Ոսկանյանը, որի թոփքի ծախսը վճարվել է «Լույս» նվազախմբի հաշվեհամարից:

Ինչպես արդեն նշվել է, բեռի փոխադրումը դեպի Հայաստան իրականացվել է ՀՀ-ում գրանցված «Best Deal» միջազգային փոխադրումներ իրականացնող ընկերության կողմից: Սույն ընկերությանը իր ծառայությունների դիմաց փոխանցված գումարները կարելի է տեսնել աղյուսակ 2.3-ում:

Աղյուսակ 2.3՝

Ամսաթիվ՝	Փոխանցման եղանակ՝	Ստացող կամ փոխանցումը նախատեսված է եղել՝	Գումարի չափը (EUR)՝	առկա ապացույց՝
03.11.2020	Միության հաշվեհամարից	«Best Deal» ՍՊԸ	2 000,00	Մասնակի այո
19.11.2020	Միության հաշվեհամարից	«Best Deal» ՍՊԸ	1 000,00	ոչ
28.12.2020	Moneygramm	«Best Deal» ՍՊԸ կատարած 3 բեռնափոխադրումների մաքսազերման համար	1 600,00	Առկա է միայն միությանը ներկայացված հաշիվը առանց մաքսային ծառայության

				փաստաթղթերի, ուստի չի ընդունվել
09.02.2021	Moneygramm, առձեռն	«Best Deal» ՍՊԸ (մաքսային տուրք)	1 600,00	Առկա է միայն միությանը ներկայացված հաշիվը առանց մաքսային ծառայության փաստաթղթերի
Ընդամենը՝	6 200 եվրո Այս գումարներից ընդունելի են եղել 800,00 եվրոն			

Գումարը հատկացվել է բեռնափոխադրումների, մաքսագերծման և այն այլ անձանց տրամադրելու նպատակով: Բազմիցս փորձեր են ձեռնարկվել (հարցումները, նամակները տե՛ս հավելվածում) կապ հաստատել «Best Deal» միջազգային փոխադրումներ իրականացնող ընկերության տնօրենի հետ և ստանալ հաշվետվության համար անհրաժեշտ փաստաթղթերը, որոնք կփաստեն բեռնափոխադրումների ժամանակ առաջ եկած այլ հավելյար ծախսերը, բեռի մաքսագերծման գործընթացը, դրա հետ կապված բոլոր ծախսերը: Փաստացի դրանք ներկայացված չեն եղել և չեն կցվել «Սիլվա Կապուտիկյան» գերմանահայ միության հաշվետվության համար անհրաժեշտ փաստաթղթերին, ուստի և չեն կարող ընդունվել այս հաշվետվության համար: Բեռնափոխադրումների և դրանց մաքսագերծման վերաբերյալ որևէ տեղեկատվություն ստանալու համար անհրաժեշտ լիազորություն ստանալու խնդրանքով՝ «Սիլվա Կապուտիկյան» գերմանահայ կանանց միության աշխատանքային խումբը դիմել է բեռնափոխադրումներն իրականացրած «Best Deal» միջազգային փոխադրումներ իրականացնող ՍՊԸ-ի տնօրեն Թադե Եդիազարյանին, սակայն անարդյունք:

Դրամահավաքի շրջանականերում բժշկական, հումանիտար և ֆինանսական միջոցների ՀՀ տեղափոխման և դրանց նպատակային օգտագործման վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով՝ իրականացվել են նաև այլ բազմաթիվ հարցումներ՝ ուղղված ՀՀ տարբեր գերատեսչություններին և դրանց ղեկավարներին (հարցումները, նամակները և ստացված պատասխանները տե՛ս հավելվածում): Այստեղ անհրաժեշտ է նշել, որ օրենսդրական սահմանափակումները լրջորեն խոչընդոտել են «Սիլվա Կապուտիկյան» գերմանահայ կանանց միության կողմից բեռնափոխադրումների համար հանգանակություններից ծախսված գումարների վերաբերյալ փաստաթղթերի ստացման գործընթացին:

Դրամական փոխանցումների հաջորդ հասցեատերը հանդիսանում է Ստեփան Թարոյանն, որին փոխանցվել կամ տրամադրվել է ընդհանուր առմամբ 3 000 եվրո: Այս գումարի ստացումը նամակի միջոցով հաստատվել է Ստեփան Թարոյանի կողմից: Այս գումարը տրամադրվել է զինվորների ընտանիքներին, հատկացվել Արցախից արտագաղթած մի քանի ընտանիքներին և ծախսվել տաք հագուստի և ներքնագգեստի, ձեռնոցների, գուլպաների և գլխարկների գնման համար: Յավոք այս ընտանիքների կողմից ստացված գումարների ստացականները բացակայում են:

Մեկ այլ դրամական փոխանցում կատարվել է Արմեն Բայրամյանին, որը հանդիսանում է Գեներալ Արկադի Տեր-Թադևոսյանի շտաբի ներկայացուցիչ և աշխատել է «Քայլ դեպի Հայրենիք» հասարակական կազմակերպության հետ: Նա նույնպես ներգրավված է եղել ֆինանսական և հումանիտար օգնության տրամադրման և վերաբաշխման գործընթացներում: «Քայլ դեպի Հայրենիք» հասարակական կազմակերպության գործունեության հիմնական առանցքն է հանդիսանում աջակցությունը փախստականներին, զինվորներին, ինչպես նաև զոհված զինվորների ընտանիքներին: Կազմակերպությունում ներգրավված են մոտ 60 կամավորկաններ, ինչպես նաև սկաուտ-կամավորներ, որոնք ակտիվորեն աջակցում են ստացված բարեգործական օգնության բաշխման աշխատանքներին ինչպես Արցախում, այնպես էլ Հայաստանում: Նրանց կողմից «Միլվա Կապուտիկյան» անվան գերմանահայ կանանց միության միջոցով տրամադրված օժանդակությունը մեր հայրենակիցներին ևս չունեն ստացականներ կամ անդորրագրեր: Նրանց ուղղված նամակ-հարցումները տե՛ս հավելվածում: Արմեն Բայրամյանի կողմից ստացվել է մեկ անդորրագիր, որը փաստում է 700 ձեռնարկուկների գնման մասին, ընդհանուր 262 500,00 դրամ արժողությամբ կատարված գնումը (մոտ 500,00 եվրո) (անդորրագիրը տե՛ս հավելված): Արմեն Բայրամյանի կողմից հաստատվել է նաև 1000 եվրոն, որը նախատեսված է եղել փախստականների և զինվորների համար: Դրանց հետագա տրամադրման վերաբերյալ չկա որևէ փաստաթուղթ՝ ստացական կամ անդորրագիր:

Ընդհանուր առմամբ Ա. Բայրամյանի կողմից հաստատվել է նրան փոխանցված 3 000 եվրոն: Համաձայն Ա. Բերդուղ-Մերինոյի կողմից ներկայացված նամակի, մեկ այլ 300 եվրո գումար էր տրամադրվել Ապարանի տարածաշրջանի հոգևոր հովիվ Տեր Մուշե քահանա Վահանյանին՝ Ապարանի մոտ 300 երեխայի համար ամանորյա նվերների գնման նպատակով: Սակայն Տեր Մուշե քահանայի պնդմամբ, նա նվիրատվություններից ոչ մի գումար ոչ մի նախաձեռնության համար չի ստացել:

Համաձայն ստացված ստացականների և տեղեկատվության՝ Շիրակի «Ֆոտոն» քուլեջի ուսուցչուհի Լուսինե Իկլիկյանը, ով ներգրավված է եղել հումանիտար օգնության ստացման և վերաբաշխման մեջ, իր գործունեության և Արցախից փախստական ընտանիքներին ֆինանսական աջակցություն ցուցաբերելու համար, ստացել է 3 020 եվրո: Սակայն բանկային փոխանցումներում, նշված է, որ նրան տրամադրվել է նաև/ևս 1 500,00 եվրո. այս գումարը նա չի ստացել:

Բարեգործական ակցիայի ժամանակ իրականացվել են 149,91 եվրոյի այլ վճարումներ (փաթեթավորում, հացաբուլկեղեն):

Ինչպես արդեն նշվեց, Աիլին Բերդուդ-Մերինոն Հայաստան մեկնելիս իր հետ է վերցրել 2.812,46 եվրո: Ըստ նրա՝ գումարը տրամադրվել է Ապարանում ապաստանած մի քանի փախստական ընտանիքների: Ցավոք ստացականներ առկա չեն:

Հաստատվել է նաև 2020թ-ի հոկտեմբերի 20-ին 209,93 եվրոյի չափով ոմն Հակոբին կատարված վճարումը:

Հիմնվելով առկա փաստաթղթերի վրա և ստացականների բացակայության պայմաններում՝ աշխատանքային խումբը չի ճանաչել նաև Ա. Բերդուդ-Մերինոյի կողմից գրավոր ներկայացված հետևյալ ծախսերը.

- Նոյեմբերի 20-ին մի քանի փախստական ընտանիքներին տրամադրված 1 200 եվրոն, ստացականները բացակայում են,
- Կամավորներից մեկի կողմից գնված 189,33 եվրո արժողությամբ դեղորայքի գումարը,
- Այվազյանների ընտանիքի համար գազատարի անցկացման համար վճարված 400 եվրոն, ստացականները բացակայում են:
- Թոիչքի տոմսերի հավելյար վճար 1 609,18 եվրո:

Առկա ֆինանսական անհամապատասխանությունների և ապացույցների բացակայության պատճառով, «Միլվա Կապուտիկյան» անվան գերմանահայ կանանց միության հաշվեհամարը փաստում է 10,639,29 եվրո պակասորդ: Սույն պակասորդի վերաբերյալ և այն միության հաշվեհամարին հետ փոխհատուցելու մասին 2022թ- հունվարի 3-ին նամակ-պահանջ է (տե՛ս հավելված) ներկայացվել «Միլվա Կապուտիկյան» անվան գերմանահայ կանանց միության նախագահին, քանզի նա է հանդիսացել ֆինանսական միջոցների առաջնային տնօրինողը:

Դրամական հանգանակությունների ընդհանուր գումարից, որը կազմել է 59. 765,54 եվրո, «Միլվա Կապուտիկյան» անվան գերմանահայ կանանց միության հաշվեհամարին դեռևս առկա է 8.285,13 եվրո: Քանի որ ներկայումս միության անդամները չունեն այս գումարի տնօրինման լիազորություն, որոշվեց գումարն՝ սկսած ըստ օրացույցի վերջին փոխանցումից հետ վճարել գումարի փոխանցողին մինչև գումարի սպառումը:

բ. Հաշվետվություն բժշական միջոցների և դրանց հատկացման վերաբերյալ

«Խաղաղություն Հայաստանին» մարդասիրական ակցիայի ընթացքում իրականացվեց նաև հայրենիքին բժշկական օգնության տրամադրում: Ինչպես ֆինանսական և նյութական օգնության դեպքում, այնպես էլ բժշկական օգնության ծավալները ավելին էին քան նախապես սպասվում էր: Այն ներառեց ոչ միայն դեղորայք և բժշկական տարբեր պարագաներ այլ նաև բժշկական սարքավորումներ, վերականգնողական բժշկության համար անհրաժեշտ պարագաներ և այլն: Բժշկական օգնության միջոցների տրամադրմանը մասնակցեցին շատ հայ բժիշկներ և հիվանդանոցներ թե՛ Գերմանիայից և թե՛ այլ երկրներից: Բժշկական օգնության մեծ մասը կատարվում էր անձնական ֆինանսավորմամբ և աջակցությամբ (սեփական գումարների հաշվին գնվում էր դեղորայք, բժշկական գործիքներ, այլ պարագաներ):

Բժշկական օգնության մեծ մասը հնարավոր եղավ ուղարկել ՀՀ «Հայաստան ֆոնդ» կազմակերպության ջանքերի շնորհիվ և միջոցով: Ընդ որում, «Միլվա Կապուտիկյան» անվան գերմանահայ կանանց միության կողմից այս կազմակերպության միջոցով ուղարկված օգնությունը փոխանցվեց նրան «օտարում հոգուտ կազմակերպության» սկզբունքով:

Բժշկական օգնությունը ուղարկվեց նաև այն ժամանակ դեռևս ՀՀ դեսպանի պաշտոնը զբաղեցնող ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Աշոտ Սմբատյանի ջանքերի շնորհիվ: Միացյալ Ազգերի Կազմակերպության բեռնափոխադրումների միջոցով ՀՀ տեղափոխեց նաև «Միլվա Կապուտիկյան» անվան գերմանահայ կանանց միության կողմից «Խաղաղություն Հայաստանին» ֆինանսա-մարդասիրական բարեգործական ակցիայի շրջանակներում ստացված բժշկական օգնությունը:

Լյուբիխ քաղաքից օդային ճանապարհով իրականացված բեռնափոխադրումները, «Միլվա Կապուտիկյան» անվան գերմանահայ կանանց միության նախագահի համակարգմամբ, Հայաստանի Հանրապետությունում «Best Deal» ընկերության կողմից ենթարկվել են մաքսազերծման, որը ևս վճարվել է նվիրատվություններից ստացված հանգանակությունների հաշվին: Սույն ընկերությունն իրականացրել է նաև վերը նշված բեռի տեղափոխում և տրամադրում ՀՀ ներսում (տե՛ս հավելվածում առկա ընկերության տնօրենին ուղղված նամակները), սակայն անհայտ հասցեով: Սրա շուրջ որևէ փաստաթուղթ առկա չէ: Այս կապակցությամբ բազմաթիվ նամակները և պահանջները մնացել են անպատասխան:

«Sunrise Medical» կազմակերպությունը կատարեց 15 աթոռ-սայլակներ նվիրատվություն: Բազմաթիվ անվասայլակներ, հենակներ, քայլելու օժանդակ միջոցներ տրամադրվում էին

Գերմանիայի բոլոր կողմերից: «Մարիա Էլիզաբեթ» անվան կացարանը նվիրաբերեց բազմաթիվ հենակներ, քայլելու օժանդակ միջոցներ, աթոռ-սայլակներ և այլ պարագաներ: Էնգելսկիրխենի կաթոլիկ հիվանդանոցը տրամադրեց սարքավորումներ, ինչպիսիք են սոնոգրաֆիկ ապարատներ, դեֆիբրիլատորներ, էլեկտրասրտագրության սարքավորումներ և այլ պարագաներ: Աուսբուրգից տրամադրվեց 15 պալետ բժշկական դիմակներ:

Նախապես պայմանավորվածության համաձայն 4 000 եվրոյի չափով պետք է հայիրանական բժշկական միության կողմից գնվեր «Human Albumin» տեսակի ներարկման համար նախատեսված ուժեղ ցավազրկող, սակայն, ներկայացված փաստաթղթերի և վերը նշված կազմակերպության վարչության ղեկավար տիկ. դոկտոր Կարմեն Սարգսյանի հետ հետադարձ խոսակցության համաձայն, հնարավոր է եղել գնել 150 ֆիքսատորներ: Այս նախաձեռնությունը անմիջականորեն աջակցվել է Իրանի իսլամական հանրապետությունում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպանի կողմից: Ընդհանուր առմամբ Հայաստան են ուղարկվել 100 պալետ բժշկական պարագաներ՝ աթոռ-սայլակներ, հենակներ, քայլելու օժանդակ միջոցներ, դեղորայք, բժշկական սարքավորումներ:

2021թ-ի հունվար ամսին կատարված նկարահանումները փաստում են բժշկական բեռի մի մեծ մասի, մասնավորապես հենակների և անվասայլակների տրամադրումը «Քայլ դեպի Հայրենիք» հասարակական կազմակերպությանը, ի դեմս Արմեն Բայրամյանի:

Ըստ Շիրակի մարզի վերաբաշխման կենտրոնի ներկայացուցիչ և համակարգող Լուսինե Իկլիկյանի կողմից ներկայացված փաստաթղթերի, բժշկական օգնության երկու տուփ 2020թ-ի դեկտեմբերի 8-ին հատկացվել են «Գյումրու մոր և մանկան» հիվանդանոցին: Ինչպես նաև նրա կողմից մեկ բժշկական սեղան, 12 սայլակ և 25 ձեռնափայտ, 8 քայլելու հենակ, 2 լոգասենյակի աթոռ և 15 տուփ հիգիենայի տարբեր պարագաներ տրամադրվել և արձանագրվել են (տե՛ս հավելված):

գ. Հաշվետվություն հումանիտար/մարդասիրական օգնության և դրանց հասկացման վերաբերյալ

«Միլվա Կապուտիկյան» անվան գերմանահայ կանանց միության կողմից իրականացված մարդասիրական ակցիայի ընթացքում հնարավոր եղավ հավաքել 2 000 տուփ (75000կգ) հումանիտար օգնություն: Քանի որ բեռը հնարավոր չէր ուղարկել միանգամից, ուստի հարց առաջացավ, թե որտեղ կարելի է դրանք ժամանակավորապես պահեստավորել: Այս հարցում օգնության եկավ «Nox» ընկերությունը՝ տրամադրելով իր պահեստները: Նշենք, որ այս ծառայությունը մատուցվել է անվճար: Հումանիտար և բժշկական օգնությունն այստեղ գտնվել է 03.10.– 22.12.2020թ.:

Այնուհետև բեռն ըստ տրանսպորտի առանձին տեսակների, այն է՝ ավտոտրանսպորտի կամ օդային տրանսպորտի եղանակով, ուղարկվել է Հայաստանի Հանրապետություն:

Հումանիտար և բժշկական օգնության բեռնափոխադրումը կատարվել է միմիայն նվիրատվություններից/հանգանակություններից գոյացած գումարների հաշվին:

Հումանիտար օգնության տեղափոխումը Հայաստանի Հանրապետություն

Բեռնափոխադրումները իրականացվել են.

- Ներգերմանական բեռնափոխադրումներ «Mel Express» և «Westcourier» ընկերությունների կողմից,
- «Best Deal» միջազգային փոխադրումների ընկերության միջոցով,
- միջազգային և պետական կազմակերպությունների աջակցության շնորհիվ,
- «Հայաստան» համահայկական հիմնադրամի աջակցությամբ:

Մինչ սակայն բեռը կհասներ Հայաստանի Հանրապետություն, այն ՀՀ փոխադրելու նպատակով՝ տեղափոխվել է նաև Գերմանիայի այլ քաղաքներ, Բելգիա, Լեհաստան և Նիդերլանդներ: Օդային տրանսպորտի եղանակով բեռն ուղարկվել է անվճար: Վերջին օդային բեռնափոխադրումն իրականացվել է 2021թ-ի հունվարի 25-ին ք. Լայպցիգից:

Ավտոտրանսպորտի միջոցով իրականացված բեռնափոխադրումների հետ կապված ծախսերը բերված են ստորև.

Աղյուսակ 3՝

Բեռնափոխադրման ծախսեր				
	Ամսաթիվ՝	Գումարի չափ (եվրո)՝	Կատարող՝	Գում. օգտ. նպատակ՝
1.	28.10.2020	5 000.00	Pete Logistik	1-ին բեռնափոխադրում
2.	02.11.2020	5 000.00	«Best Deal» ՍՊԸ	2-րդ բեռնափոխադրում
3.	03.11.2020	2 000.00	«Best Deal» ՍՊԸ	Ծախսեր կապված 2-րդ բեռն. հետ
4.	19.11.2020	1 000.00	«Best Deal» ՍՊԸ	Ծախսեր կապված 2-րդ բեռն. հետ
5.		3 480.00	«Mel-Express» ՍՊԸ	Ներգերմանական բեռնափոխադրում

6.	20.10.2020	550.00	«Westcourier» ընկերություն	Ներգերմանական բեռնափոխադրում
----	------------	--------	-------------------------------	------------------------------

Ինչպես երևում է աղյուսակից, ներգերմանական բեռնափոխադրումները իրականացվել են «Westcourier» ընկերության և է «Mel-Express» ՍՊԸ-ի կողմից: «Mel-Express» ՍՊԸ-ի միջնորդությամբ կատարվել է նաև տաք-ներքնազգեստի մեծածախ գնում: Այս ընկերության ընտրությունը պայմանավորված է եղել գնման ժամանակ եկամտահարկի խնայման հնարավորությամբ: Ինչպես կարելի է տեսնել վերևում ներկայացված աղյուսակից, «Mel-Express» ընկերությունը բեռնափոխադրում իրականացնելու իր ծառայությունների համար ստացել է 3 480,00 եվրո:

«Westcourier» ընկերության կողմից Գերմանիայի ներսում իրականացված բեռնափոխադրման ծախսը՝ ըստ առկա անդորրագրերի կազմել է 550 եվրո:

Նախապես պլանավորված է եղել բեռնափոխադրումները դեպի ՀՀ իրականացնել գերմանական բեռնափոխադրող ընկերությունների միջոցով, սակայն դա չի հաջողվել: Ապա Ժաքլին Թումաքի միջնորդությամբ կապ է հաստատվել Հայաստանում գրանցված «Best Deal» ՍՊԸ-ի տնօրենի հետ, որի հետ աշխատել է և որի աշխատանքները համակարգվել են Աիլին Բերդուդ-Մերինոյի կողմից:

Վերը նշված ընկերության կողմից ՀՀ կատարվել է երկու բեռնափոխադրում. առաջինը 2020թ-ի հոկտեմբերի 15-ին 9.890տ բեռ և երկրորդը 2020թ-ի նոյեմբերի 23-ին 12.242տ բեռի չափով: Բեռնափոխադրումն իրականացնելուց հետո, ստացվեց տեղեկություն, որ հումանիտար օգնությունը ենթարկվել է մաքսազերծման, որի համար վճարվել է 3 200,00 եվրո՝ կրկին նվիրատվություններից ստացված գումարների հաշվին:

«Միլվա Կապուտիկյան» անվան գերմանահայ կանանց միության նախագահի մաքսազերծմանը վերաբերող բացատրության համաձայն, մեքսազերծումն անհրաժեշտ է եղել, քանի որ բեռի պահեստավորումը ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարության պահեստում կապված է եղել վճարումների հետ:

Այստեղ հատկանշական է նշել, որ ըստ Հայաստանի Հանրապետություն կատարված հարցման (հարցումը և ԱԻՆ վարչության ղեկավարի նամակ-պատասխանը տե՛ս հավելված), «Միլվա Կապուտիկյան» անվան գերմանահայ կանանց միության կողմից ուղարկված ողջ հումանիտար օգնությունը հանձնվել է ՀՀ պետությանը՝ «օտարում հոգուտ պետության» սկզբունքի հիման վրա: Ըստ վարչության պետի ուղարկված հումանիտար օգնության պահեստավորումը չի ենթադրել և՛ ոչ մի ծախս:

Մաքսազերծման վերաբերյալ «Միլվա Կապուտիկյան» անվան գերմանահայ կանանց միության նախագահին ուղղված գրավոր հարցմանն ի պատասխան, ստացվել է, որ մեքսազերծումն ու բեռի հետագա բաշխումը անհրաժեշտ էր իրականացնել սեփական

ուժերով կամ իր կողմից լիազորված «Best Deal» ՍՊԸ-ի տնօրենի միջոցով, որպեսզի հնարավոր լիներ խուսափել Հայաստանում առկա անկառավարելի վիճակից և բազմաթիվ անկարգություններից և որ հակառակ դեպքում՝ անհայտ կմնար հումանիտար օգնության ճակատագիրը:

Ըստ 2020թ-ի դեկտեմբերի 24-ին ստացված անդորրագրի 001-24/12/20 մաքսագերծված մարդասիրական օգնությունը տեղափոխվել է ք. Գյումրի: Սակայն այս տեղեկատվությունը չի համապատասխանում իրականությանը, քանի որ սույն բեռի ստացումը չի հաստատվել Գյումրի քաղաքի պաշտոնական վերաբաշխման կենտրոնի համակարգող Լուսինե Իկլիկյանի կողմից: Գյումրի քաղաքի վերաբաշխման կենտրոնը «Best Deal» ՍՊԸ-ի կողմից երբևէ որևէ բեռ չի ստացել:

Ընդհանուր առմամբ «Best Deal» ՍՊԸ-ի կողմից իրականացվել է երկու բեռնափոխադրում: Պլանավորված երրորդ և Գերմանիայում արդեն մաքսագերծված բեռի տեղափոխումն անընդհատ հետաձգվում էր ընկերության կողմից: Ի վերջո այն ուղարկվել է Լայպցիգից:

Ինչպես երևում է աղյուսակ 3-ից և փաստում են բանկային փոխանցումները, առաջին բեռնափոխադրման համար «Best Deal» ՍՊԸ-ին նոյեմբրի 2-ին փոխանցվել է նախապես պայմանավորված 5 000 եվրոն: Սակայն հաջորդ օրը, նրան կրկին փոխանցվում է 2 000 եվրո: 2020թ-ի նոյեմբերի 19-ին բեռնափոխադրում իրականացնող կազմակերպության կողմից վճարման նպատակով միությանն է ներկայացվում 1 380 եվրոյի հաշիվ: Պատճառները ճշտելու իրեն ուղղված հարցին Աիլին Բերդուդ-Մերինոն նշել է, որ այս գումարն անհրաժեշտ էր վճարել, քանի որ բեռնափոխադրող ընկերությունը հակառակ դեպքում օգտվելով գույքի արգելանքի իր իրավունքից՝ կարող էր բեռը դուրս չտալ: Ըստ օրացույցի, նոյեմբերի 3-ին արդեն իսկ փոխանցվել է 7 000 եվրո: Ինչպես՝ս էր հնարավոր նախապես իմանալ սպասվելիք տույժի մասին, և ինչու՝ աննախադեպ ծախսերը չեն կատարվել բեռնափոխադրող ընկերության հաշվին: Այստեղ հատկանշական է նշել նաև, որ բեռն, անցնելով Թուրքիայի սահմանը (բեռնափոխադրումը Թուրքիայով նախապես պլանավորված չի եղել), ենթարկվել է տույժի, ինչպես նաև բեռի մի մասը գողացվել է: Տույժի վերաբերյալ չկա որևէ փաստաթուղթ, սակայն այն վճարվել է: Տույժի համար վճարված 580 եվրոն չի ճանաչվել աշխատանքային խմբի կողմից: Ինչպես նաև, անդորրագրերի և ստացականներ բացակայության պատճռով, չեն ճանաչվել նաև «Սիլվա Կապուտիկյան» անվան գերմանահայ կանանց միության նախագահի կողմից «Best Deal» ՍՊԸ-ի տնօրենին հետագա վերաբաշխման համար առձեռն տրված 1 620 եվրոն:

Ըստ Moneygram վճարման համակարգով կատարված փոխանցումների՝ «Best Deal» ՍՊԸ-ին երկու անգամ փոխանցվել է 1 600 եվրո, ըստ նշված փոխանցման նպատակի, սույն գումարը հատկացվել է ՀՀ-ում բեռի մաքսագերծման համար:

Աղյուսակ 3.1

	Ամսաթիվ՝	Գումարի չափ (եվրո)՝	Գում. օգտ. նպ.՝
1.	28.10.2020	1 600,00	Հումանիտար բեռի մաքսագերծում ՄԱԿ-ի կողմից 4 բեռնափոխադրում՝ 20.11., 04.12., 18.12. և 23.12.2020
2.	01.02.2021	1 600,00	Հումանիտար բեռի մաքսագերծում, Լայպցիգից կատարված բեռնափոխադրում օդանավի միջոցով

Վերը նշված մաքսագերծումները փաստող փաստաթղթերի բացակայության պատճառով, հարցում է կատարվել ՀՀ մաքսային ծառայություն (հարցումը և մաքսային ծառայության պատասխանը տե՛ս հավելվածում): Ըստ ստացված պատասխանի՝ մաքսային ծառայությունից իրավասու են փաստաթղթեր պահանջել գործարքի մեջ անմիջապես ներգրավված անձինք: Սակայն «Best Deal» ՍՊԸ-ի տնօրենը, ով իրականացրել է այս մաքսագերծումը, չնայած իրեն ուղղված գրավոր պահանջներին, չի տրամադրել ոչ մի փաստաթուղթ (հարցումը տե՛ս հավելվածում):

Մաքսային ծառայությանը միության կողմից ուղղված երկրորդ նամակին ի պատասխան ստացվել է լիազորագիր ներկայացնելու պահանջ: Այն ստանալու համար՝ կրկին նամակ է ուղղվել «Best Deal» ՍՊԸ-ի տնօրենին, կրկին՝ անպատասխան: Ուստի մաքսագերծման համար վճարված գումարների մասին (3 200 եվրո) չկա հավաստի փաստեր: Ծախսերը բերված են աղյուսակ 3.1–ում: Ինչպես նաև անհայտ է մնում մաքսագերծված ապրանքների/օգնության բովանդակությունը և դրանց ճակատագիրը:

Հումանիտար օգնության ստացումն ու վերաբաշխումը

Հումանիտար օգնության ստացման և վերաբաշխման աշխատանքերն իրականացվել են հետևյալ անձանց մասնակցությամբ.

«Best Deal» ՍՊԸ-ի տնօրենը համագործակցել է ՀՀ տարբեր պետական մարմինների և վարչությունների հետ: Նրան ուղղված մի շարք հայց-նամակները տե՛ս հավելվածում:

Ըստ ներկայացված տեղեկատվության «Armenian Food Bank» կազմակերպության ներկայացուցիչ Ստեփան Թարոյանը հոկտեմբերի սկզբին իրականացրել է հումանիտար օգնության բաշխում (ստացել է երկու մեծ վրան, 40 քնապարկ և հումանիտար այլ օգնություն): Նրան վերաբաշխման համար տրամադրված 20 տուփ հումանիտար օգնության ստացումը նրա կողմից հաստատվել են 2020թ-ի նոյեմբերի 15-ին գրավոր նամակի միջոցով:

AGBU SCOUT Yerevan «Արաբկիր հայորդաց տուն» կազմակերպությանը, որը պետք է իրականացներ իր կողմից տրամադրված հումանիտար և ֆինանսական օգնություն ստացած շահառուների և տրամադրված օգնության ծավալների, գումարների գրանցում, պաշտոնապես ուղարկվել են հարցումներ, սակայն դրանք չեն տրամադրվել (հարցումները

տե՛ս հավելվածում), ուստի և իրենց արտացոլումը չեն կարող գտել հաշվետվություն-
զեկույցի մեջ:

ՀՀ Արագածոտն մարզի Ապարան համայնքի Շենավան վարչական տարածքի ղեկավար Ժ.
Ղազարյանին տրամադրվել է 25 տուփ հումանիտար օգնություն: Ինչպես նաև Ծաղկաշեն
համայնքի ղեկավար Համլետ Ոսկանյանը Արցախից տեղահանված 20 ընտանիքի համար
ստացել է հումանիտար օգնություն, սակայն օգնության ծավալը անհայտ է, ինչպես նաև
բացակայում են վերաբաշխումը փաստող որևէ ստացական կամ գրանցում:

Շիրակի մարզի Գյումրու վերաբաշխման կենտրոնին կատարված դրամական
փոխանցումները բերված են ստորև.

Աղյուսակ 3.2՝

Ամսաթիվ՝	Գումար՝ եվրո	Նշումներ՝
23.10.2020	Մոտ 800.00	350 000 AMD առձեռն
23.10.2020	220.00	առձեռն
06.11.2020	500.00	285 000 AMD փոխ. «Best Deal» ՍՊԸ-ի տնօրենի կողմից Գյումրու վերաբաշխման կենտրոնի ներկայացուցչի հաշվեհամարին
24.11.2020	1 500.00	առձեռն
Ընդամենը՝	3 020.00	

Գյումրու վերաբաշխման կենտրոնի կողմից և միջոցով հումանիտար օգնության բաշխման
վերաբերյալ առկա բոլոր փաստաթղթերը կարելի է տեսնել սույն հաշվետվության
հավելվածում:

Գյումրու վերաբաշխման կենտրոնի համակարգող կուսինե Իկլիկյանն, որպես հումանիտար
օգնության վերաբաշխման պաշտոնական կենտրոնի ներկայացուցիչ, հումանիտար
օգնություն ստանալու և այնուհետև այն բաշխելու նպատակով սովորաբար գրավոր դիմում
է ներկայացնում Հայաստանի Հանրապետության Արտակարգ իրավիճակների
նախարարությանը: Դիմումին դրական պատասխան ստանալուց հետո, հումանիտար
օգնությունն անվճար տեղափոխվում է ք. Գյումրի: Բաշխումը կատարվում է կամովորների
կողմից: «Միլվա Կապուտիկյան» անվան գերմանահայ կանանց միության նախագահի
կարգադրության հիման վրա Գյումրու վերաբաշխման կենտրոնի ղեկավարը
կազմակերպում է հումանիտար օգնության տեղափոխում Գյումրի, բայց արդեն վճարովի
հիմունքներով: Բոլոր ծախսերը՝ ավտոմեքենայի վարձույթ, վարորդ և բանվորներ,
կատարվում են Իկլիկյանին փոխանցված գումարների հաշվին: Գյումրու հումանիտար
վերաբաշխման կենտրոնը երբևէ բեռ չի ստացել «Best Deal» ՍՊԸ-ի կողմից:

Գյումրու վերաբաշխման կենտրոնը ստացել է հետևյալ հումանիտար օգնությունը.

Աղյուսակ 3.3

24.11.2020	2-րդ բեռնափոխադրումից հումանիտար օգնության մի քանի տուփ, ինչպես նաև բժշկական օգնության երկու տուփ, որոնք դեկ. 8-ին հատկացվել են Գյումրու մոր և մանկան հիվանդանոցին (ստացականները տե՛ս հավերժացում)
19.01.2020	Բելգիայից ստացված 22 տուփ հումանիտար օգնություն, մեկ բժշկական սեղան, 12 սայլակ, 25 ձեռնափայտ, 8 քայլելու հենակ, 2 լոգասենյակի աթոռներ, մեկ մանկական սայլակ, 1 տուփ բժշ. պարագաներ, 1 տուփ մոմ, 15 տուփ հիգիենայի պարագաներ
Փետրվար, մարտ ամիսներին	Լայփցիգից ստացված հումանիտար օգնություն, ինչպես նաև ԱԲՆ-ի պահեստներում դեռևս առկա հումանիտար և բժշկական օգնություն:

Գյումրու հումանիտար օգնության վերաբաշխման պաշտոնական կենտրոնից Աիլին Բերդուղ-Մերինոյի միջնորդությամբ օգնությունը գալիս են ստանալու տարբեր անձինք, որոնք ունեն նախապես գրված ցուցակ, թե որ և ինչ իրեր նրանք պետք է ստանան: Գյումրու վերաբաշխման պաշտոնական կենտրոնի ղեկավարը կատարել է սույն իրերի արձանագրում (մանրամասն տե՛ս հավելված):

Աիլին Բերդուղ-Մերինոյի որոշմամբ հումանիտար բեռի մեկ այլ վերաբաշխման կենտրոն հաստատվեց Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Ծաղկաշեն գյուղում: Սակայն այս կենտրոնի կողմից ստացված հումանիտար օգնության վերաբաշխման գործընթացի չի կատարվել կանոնակարգված, քանզի բացակայում են ստացականները և փաստաթղթերը: Ստորև բերված աղյուսակում ներկայացված են Ապարան համայնքին ուղղված դրամական փոխանցումները:

Աղյուսակ 4՝

Ամսաթիվ՝	Գումար՝ եվրո	Նշումներ՝
02.11.2020	603,99	Moneygram վճարման համակարգի միջոցով՝ առանց նշելու փոխանցման նպատակը
16.11.2020	253,99	Moneygram վճարման համակարգի միջոցով՝ առանց նշելու փոխանցման նպատակը
21.10.2020	1.000,00	Առձեռն
23.11.2020	500,00	Առձեռն
2020-ի նոյեմբերին	800,00	«Best Deal» ՄՊԸ-ի տնօրենի միջոցով
Ընդամենը՝	3.150,00 եվրո	

Անահիտ Մոզոյանն և Արմեն Պատվականյանը վերաբաշխման նպատակով՝ ստացել են հումանիտար օգնության մի մասը, ինչպես նաև ֆինանսավորել արցախյան մի քանի ընտանիքի ծախսերը: Ցավոք կրկին մոտ 3 150,00 եվրո գումարի ստացականները բացակայում են: Անահիտ Մոզոյանն Արմեն Պատվականյանը համագործակցել են նաև

Արագածոտն մարզի Ծաղկաշեն համայնքի ղեկավար Համլետ Ոսկանյանի հետ՝ համայնքին տրամադրելով հումանիտար և ֆինանսական օգնություն: Ստացականներ կամ բաշխումը փաստող պաշտոնական փաստաթղթեր այս կապակցությամբ առկա չեն: Անահիտ Մոզոյանից և Արմեն Պատվականից ստացվել է միայն իրենց կողմից ստացված 1.500 եվրո կազմած գումարի վերաբերյալ առանց ստորագրության և ամսաթվի հաստատում-նամակը, (տե՛ս հավելված): Ըստ այդ նամակի՝ վերը նշված գումանը ծախսվել է.

- Վառելափայտի գնման համար, գնման ընդհանուր արժեքը կազմել է 340.000 դրամ կամ 585,00 եվրո:
- 310 եվրո կամ 180 000 դրամ արժողության ամանորյա նվերների (300 հատ) գնում:
- Մեքենայի գազալցում, մոտ 86 եվրո կամ 50 000 դրամ:

Ներկայացված անդորրագրերի հրման վրա հնարավոր է եղել փաստել միայն 985,00 եվրոյի ծախսը, մնացորդը կազմել է 515,00 եվրո: Մինչ օրս անհայտ է մնում մնացորդային գումարի ճակատագիրը, ինչպես նաև պատասխանը այն հարցին, թե ինչի՞ համար էր նախատեսված մնացած 850,00 եվրո կազմած Moneygram-փոխանցումը: Ինչպես նաև Ա. Պատվականյանի կողմից չի ստացվել հաստատում, որ նա Թ. Եղիազարյանից ստացել է 800 եվրո: 2021թ-ի ապրիլ ամսին Ա. Պատվականյանը ներկայացնում է մեկ այլ նամակ-հաստատում 3 200 եվրոյի ստացման մասին, սակայն քանի որ գումարի փոխանցումն իրականացվել էր նախորդ տարվա նոյեմբերին, այս նամակը չի ընդունվել որպես ստացական, քանի որ այն առաջին նամակում պետք է արդեն նշված լիներ:

Եզրակացություն

Սույն զեկույց-հաշվետվության նպատակն էր թափանցիկ և ամբողջական նկարագրելով և ներկայացնելով «Միլվա Կապուտիկյան» անվան գերմանահայ կանանց միության անունից արցախյան պատերազմի ժամանակահատվածում իրականացված «Խաղաղություն Հայաստանին» մարդասիրական բարեգործական ակցիան և այդ ակցիայի շրջանակներում ստացված նյութական, բժշկական և ֆինանսական օգնության վերաբաշխման գործընթացը և արդյունքները, պաշտոնապես ճանաչել «Խաղաղություն Հայաստանին» մարդասիրական բարեգործական ակցիան «Միլվա Կապուտիկյան» անվան գերմանահայ կանանց միության անդամուհիների կողմից:

Զեկույցի համար հիմք են հանդիսացել աշխատանքային խմբին ներկայացված ֆինանսական և բանկային տարբեր հոսքերը փաստող փաստաթղթերը, առկա անդորրագրերը, նամակագրությունը տարբեր անձանց, պետական կառույցների, կազմակերպությունների և ընկերությունները հետ:

Հիմնվելով սույն զեկույցի հիմքում ընկած տեղեկատվության և դրա վերլուծության վրա՝ ստացվեցին հետևյալ արդյունքները.

1. հնարավոր չի եղել փաստել հանգանակությունները ստացված 10.639,29 եվրոյի տրամադրումը և նպատակային ծախսումը:

2. Բժշկական օգնության ստացման, գնման և դրա տրամադրման մասին առկա փաստաթղթերը և տեղեկատվությունը (մասնավորապես տեսանյութերը) ցավոք հնարավորություն չեն տալիս ստանալ դրանց հետագա տրամադրման ամբողջական պատկերը: Չնայած փաստելի է դեղորայքի և բժշկական տեխնիկայի գնումն ու նվիրատվության տեսքով ստացումը, սակայն դրանց տրամադրումը իր արտացոլումը չի գտել փաստաթղթերի և ստացականների մեջ, որոնք առավել վստահելի և ընդունելի հիմք կհանդիսանային վերլուծության համար:

3. Նյութական օգնության տեղափոխումը, մաքսազերծումը և դրա տրամադրումը առավել քան կանոնակարգված չեն եղել: Առկա տեղեկատվությունը և փաստաթղթերը հնարավորություն չեն տվել փաստել հանգանակություններից տրամադրված բեռնափոխադրման ծախսերը. բեռի մաքսազերծման մասին փաստող որևէ փաստաթուղթ առկա չէ, առկա են միայն բանկային տարբեր փոխանցումներ և վճարումներ բեռնափոխադրումներ իրականացրած տարբեր ընկերություններին, առկա են միայն բեռնափախադրումներ իրականացրած մի քանի ընկերությունների կողմից ներկայացված անդորրագրեր:

«Միլվա Կապուտիկյան» գերմանահայ կանանց միության նախագահը, հանդիսանալով «Խաղաղություն Հայաստանին» մարդասիրական բարեգործական ակցիայի կազմակերպիչ և ակցիայի շրջանակներում ստացված ֆինանսական միջոցների առաջնային տնօրինող,

պարտավորվում է «Միլվա Կապուտիկյան» գերմանահայ կանանց միության հաշվեհամարին փոխանցել վերջնահաշվարկի և ստուգումներ արդյունքում ստացականների կամ անդորրագրերի մեջ իրենց արտացոլումը չգտած 10.639,29 եվրոն:

Աիլին Բերդուդ-Մերնոն իր պարտավորությունը պետք է գրավոր ներկայացնի «Միլվա Կապուտիկյան» գերմանահայ կանանց միությանը և սահմանված ժամկետում վճարի 10.639.29 եվրո: Միայն այս դեպքում էր հնարավոր «Խաղաղություն Հայաստանին» մարդասիրական բարեգործական ակցիայի պաշտոնական ճանաչումը «Միլվա Կապուտիկյան» գերմանահայ կանանց միության կողմից:

Ուստի «Խաղաղություն Հայաստանին» մարդասիրական բարեգործական ակցիայի շրջանակներում «Միլվա Կապուտիկյան» գերմանահայ կանանց միության կողմից տրված հանգանակությունները փաստող անդորրագրերը կորցնում են իրենց վավերականությունը:

Ինչպես նաև դրամական հանգանակություններից «Միլվա Կապուտիկյան» անվան գերմանահայ կանանց միության հաշվեհամարին դեռևս առկա 8.285,13 եվրոն պետք է վերադարձվի նվիրատուներին: Գումարը, ըստ օրացույցի վերջին փոխանցումից սկսած, հետ կվճարվի գումարի փոխանցողին մինչև ողջ գումարի սպառումը: